ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
26.05.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԾՁԲ-17/1 գնման պայմանագրի

ք. Երևան 23 .12.2019 թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Բագարանի բարիք>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ս. Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 26.05.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԾՁԲ-17/1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 4.1.2 կետից հետո ավելացնել նոր ենթակետ՝ հետևյալ խմբագրությամբ.

<<4.1.3 Պայմանագրի գնից մինչև 1 **095 562 (մեկ միլիոն իննսունհինգ հազար հինգ հարյուր վաթսուներկու)** ՀՀ դրամը՝ համապատասխան բանկային երաշխիքի առկայության դեպքում, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012573 ՀՎՀՀ 02565827	<<Բագարանի բարիք>> ՓԲԸ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, <<Կիևյան>> մ/ճ Հ/Հ 11500498836200 ՀՎՀՀ 02235628
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	Ս. Մարգարյան (ստորագրություն) Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
"ARMBUSINESSBANK" CJSC

N 8836-02
«23» 12 2019

ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **ՀՀ քաղաքաշինության կոմիտե** և **<<Բագարանի բարիք>> ՓԲԸ/** (այսուհետ՝ պրինցիպալ) միջև **26.05.2017թ-ին** կնքված **N ՀՀՔՊԿ-ԲԸԾՁԲ-17/1** ծածկագրով պայմանագրի շրջանակներում կանխավճար ստանալուց բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է ՀՀ Ֆինանսների նախարարության /այսուհետ՝ Բենեֆիցիար/՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **1,095,562 /մեկ միլիոն իննսունհինգ հազար հինգ հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ կանխավճարի գումար)՝ պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի կողմից նշված բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ կանխավճարի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Սույն երաշխիքը ուժի մեջ է մտնում կանխավճարի գումարը Պրինցիպալի՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում առկա թիվ 11500498836200 բանկային հաշվին փոխանցելու պահից և գործում է մինչև 30.06.2020թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) Պայմանագիրը
2) Խախտման հիմնավորումը

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում կանխավճարի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել կանխավճարի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով

սահմանված ժամկետում չի վճարում կանխավճարի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, կանխավճարի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում կանխավճարի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության Նախագահ՝ Ա. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Սարգսյան